Ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման հարկային հաշիվ — Ա8038685862

[1] Դուրս գրման ամսաթիվ			Հարկային հաշիվ (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
3	Հոկտեմբեր	2019 թ.		Ա	8038685862
[4] Մատակարարման ամսաթիվ					
26	Սեպտեմբեր	2019 թ.	Կարգը (անհրաժեշտության դեպքում վանդակում նշել «X») — հաստուկ	Ճշգրտվող հաշվի Սերիա	Ճշգրտվող հաշվի Համար
				Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար	
			[7]
			[8]
			[9]

[10] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձ

[11] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 9 4 0 7 9 8 8
[12] Անվանումը	ՆՅԱՐԴԱՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՄԱՐԶ. ԴԻՍՊ. Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)
[13] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0 9 4 0 7 9 8 8 / 1
[14] Բանկային տվյալները	ՎՏԲ Հայաստան բանկ Կապան մ/ճ — N 16022457801500
[15] Գտնվելու վայրը (հասցեն)	ՍՅՈՒՆԻՔ ԿԱՊԱՆ ԿԱՊԱՆ Բաղաբերդի 48
[16] Լրացուցիչ տվյալներ	

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձ

[17] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 2 6 3 1 2 6 3
[18] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ
[19] Բանկային տվյալները	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն — N 900011000834
[20] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5
[21] Լրացուցիչ տվյալներ	
[22] Ում միջոցով	Անուն, ազգանուն:
	Լիազորագիր — Համար:
	Լիազորագիր — Ամսաթիվ:

[23] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափման միավորը	Ծառայության ծավալը (ժամանակաշրջանը)	Միավորի գինը	Արժեքը	ԱԱՀ դրույքաչափը (%)	ԱԱՀ գումարը	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9
1	Թիվ 32200419 թթ. գործով դատահոգեբուժական փորձաքննություն	դեպք	1	32833	32833	20	6566.6	39399.6
Ընդամենը					32833	X	6566.6	39399.6

Դուրս գրող՝ ALAVERDYAN ANAHIT 6711590040
անունը, ազգանունը

Ստացող
պաշտոնը — ստորագրությունը — (անունը, ազգանունը)
պաշտոնը — ստորագրությունը — (անունը, ազգանունը)

03/10/2019 14:03:52

Որոշում
ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին

03 օգոստոսի 2019թ. ք. Գորիս

ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչության Գորիսի քննչական բաժնի պետի տեղակալ, առաջին դասի խորհրդական Արման Մանուչարյանս, վերանայելով վարույթում քննվող թիվ 32200419 քրեական գործի նյութերը,

պարզեցի՝

2019թ. հուլիսի 3-ին՝ ժամը 01:30-ին, ոստիկանության Երևան քաղաքի վարչության օպերատիվ կառավարման կենտրոնից ոստիկանության Գորիսի բաժին հաղորդվել է, որ Գորիս քաղաքի Յոլյան փողոցի 20-րդ հասցեում դանակահարություն է:

Ահազանգի հիմքով ոստիկանության Գորիսի բաժնում նախապատրաստված նյութերով տվյալներ են ձեռք բերվել, որ ՀՀ ոստիկանության Գորիսի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի պետ, ոստիկանության փոխգնդապետ Հուսիկ Հովհաննիսյանը և նույն բաժնի ՊՊԾ դասակի հրամանատար, ոստիկանության կապիտան Գառնիկ Խաչունցը, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 11-րդ հոդվածներով սահմանված կարգով ունենալով կյանքի կամ առողջության համար վտանգավոր այլ վիճակներում գտնվող մարդկանց օգնություն ցույց տալու, հանցագործությունները հայտնաբերելու և բացահայտելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու պարտականություններ, իսկ նույն օրենքի 19-րդ հոդվածով սահմանված կարգով օժտված լինելով ոստիկանության վրա դրված խնդիրների իրականացմանը խոչընդոտող գործողությունները դադարեցնելու քաղաքացիներին պահանջ ներկայացնելու լիազորություն, այսինքն՝ հանդիսանալով ծառայողական ենթակայության տակ չգտնվող անձանց նկատմամբ սահմանված կարգով կարգադրիչ լիազորություններով օժտված իշխանության ներկայացուցիչներ, 2019թ. հուլիսի 3-ին՝ ժամը 01:30-ի սահմաններում, ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության օպերատիվ կառավարման կենտրոնից ստանալով Գորիս քաղաքի Յոլյան փողոցի 20-րդ տանը դանակահարություն լինելու վերաբերյալ ահազանգը, ահազանգի բովանդակությունն ստուգելու նպատակով մեկնել են նշված հասցե, որտեղ ներկաներից Գորիս քաղաքի բնակիչ Լիաննա Յուրիի Ջավահիրյանը հայտարարել է, որ ոստիկանություն ինքն է ահազանգել հաճույքի համար, իսկ հանցագործության հնարավոր հետքեր հայտնաբերելու նպատակով տեսողական դիտում կատարելու ընթացքում Լ.Ջավահիրյանը տվել է սեռական բնույթի հայհոյանքներ և ծառայողական պարտականությունների կատարման կապակցությամբ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն է գործադրել իշխանության ներկայացուցիչների նկատմամբ, այն է՝ ոստիկանության խնդիրների իրականացմանը չխոչընդոտելու օրինական պահանջ ստանալուց հետո չի ենթարկվել այդ պահանջին և բռունցքով հարվածել է Հ.Հովհաննիսյանի դեմքին, պոկել ուսադիրը, որպիսի գործողությունների համար ոստիկանության Գորիսի բաժին բերման ենթարկվելու ընթացքում հարվածել է նաև Գ.Խաչունցին:

Նախապատրաստված նյութերի հիման վրա 2019 թվականի հուլիսի 3-ին Սյունիքի մարզի դատախազությունում ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 32200419 քրեական գործը, որը Գորիսի քննչական բաժնում վարույթ է ընդունվել 2019 թվականի հուլիսի 4-ին:

Բացի այդ, 2019 թվականի հունիսի 22-ին Սոֆյա Հարությունյանը ոստիկանության Գորիսի բաժնում հաղորդում է տվել, որ նույն օրը՝ ժամը 02:40-ի սահմաններում, իրենց տան բակում Միեր Արկադիայի Ղազարյանը, Լիաննա Յուրիի Ջավահիրյանը և այլոք հայհոյանքներ են տվել, որի ժամանակ Միեր Ղազարյանը դանակով փորձել է հարվածել որդուն՝ Գոռ

Հարությունյանին, իսկ Լիաննա Ջավահիրյանը քարով հարվածել ու վնասել է որդուն պատկանող «Մերսեդես» մակնիշի 35 XC 723 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի դիմապակուն:

Հաղորդման հիմքով նախապատրաստված նյութերով ոստիկանության Գորիսի բաժնում 2019 թվականի հուլիսի 2-ին ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 32155219 քրեական գործը, որը Գորիսի քննչական բաժնում վարույթ է ընդունվել 2019 թվականի հուլիսի 8-ին:

Նույն օրը որոշում է կայացվել թիվ 32155219 քրեական գործը թիվ 32200419 քրեական գործին միացնելու և մեկ վարույթում նախաքննություն կատարելու մասին:

Կատարված քննությամբ պարզվել է, որ Լիաննա Ջավահիրյանը 2019 թվականի հունիսի 22-ին՝ ժամը 02:40-ի սահմաններում, Գորիս քաղաքի Սյունիքի փողոցի 169-րդ տան մոտակայքում կենցաղային հարցերի շուրջ ծագած վիճաբանության ընթացքում դիտավորությամբ քարով հարվածել է Գոռ Հարությունյանին փաստացի պատկանող «DAIMLER BENZ CLK 320» մակնիշի 35 XC 723 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի դիմապակուն՝ պատճառելով զգալի չափերի՝ 40.000 ՀՀ դրամի վնաս:

Բացի այդ, նա 2019թ. հուլիսի 3-ին՝ ժամը 01:30-ի սահմաններում, Գորիս քաղաքի Յոլյան փողոցի 20-րդ տանը դանակահարություն լինելու վերաբերյալ կեղծ ահազանգ է հաղորդել ՀՀ ոստիկանությանը, որի ստուգման համար «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 11-րդ հոդվածներով սահմանված կարգով կյանքի կամ առողջության համար վտանգավոր այլ վիճակներում գտնվող մարդկանց օգնություն ցույց տալու, հանցագործությունները հայտնաբերելու և բացահայտելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու պարտականություններ, իսկ նույն օրենքի 19-րդ հոդվածով սահմանված կարգով ոստիկանության վրա դրված խնդիրների իրականացմանը խոչընդոտող գործողությունները դադարեցնելու քաղաքացիներին պահանջ ներկայացնելու լիազորություն ունեցող, այսինքն՝ ծառայողական ենթակայության տակ չգտնվող անձանց նկատմամբ սահմանված կարգով կարգադրիչ լիազորություններով օժտված, իշխանության ներկայացուցիչներ համարվող ՀՀ ոստիկանության Գորիսի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի պետ, ոստիկանության փոխգնդապետ Հուսիկ Հովհաննիսյանը և նույն բաժնի ՊՊԾ դասակի հրամանատար, ոստիկանության կապիտան Գառնիկ Խաչունցը նույն օրը՝ ժամը 02:40-ի սահմաններում, ժամանել են նշված հասցե, որտեղ ականատես լինելով Հ.Հովհաննիսյանի կողմից հանցագործության հնարավոր հետքեր հայտնաբերելու նպատակով գործուն միջոցներ ձեռնարկելու հանգամանքներին, խոչընդոտել է նրա լիազորությունների իրականացմանը, չի ենթարկվել նրա օրինական՝ տվյալ վայրից հեռանալու և գործողություններին չխոչընդոտելու պահանջին, ապա տեսնելով, որ ոստիկանության ծառայողն անդրդվելի է իր ծառայողական պարտականությունների սահմանված կարգով կատարման նկատմամբ, կապված իշխանության ներկայացուցչի ծառայողական պարտականությունների կատարման հետ, սկսել է վիճաբանել, այնուհետև առողջության համար ոչ վտանգավոր բռնություն է գործադրել, այն է՝ բռունցքով հարվածել է Հուսիկ Հովհաննիսյանի դեմքին, պոկել ուսադիրը, թքել նրա դեմքին, որպիսի գործողությունների համար ոստիկանության Գորիսի բաժին բերման ենթարկվելու ընթացքում հարվածել է նաև Գառնիկ Խաչունցի դեմքին՝ նրանց պատճառելով ֆիզիկական ցավ:

2019 թվականի հուլիսի 10-ին Լիաննա Ջավահիրյանը ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով և 185-րդ հոդվածի 1-ին մասով ներգրավել է որպես մեղադրյալ:

Նույն օրը Լիաննա Ջավահիրյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու համար միջնորդություն է ներկայացվել Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան, որի քննարկումը հետաձգվել ու նշանակվել է 2019 թվականի հուլիսի 15-ին:

2019 թվականի հուլիսի 11-ին Լիաննա Ջավահիրյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով և 185-րդ հոդվածի 1-ին մասով, 2019 թվականի հուլիսի 15-ին որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը՝ 2 ամիս ժամկետով 2019 թվականի օգոստոսի 3-ին Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2019 թվականի հուլիսի 15-ի որոշմամբ կիրառված կալանավորում խափանման միջոցը թողնվել է անփոփոխ:

Մեղադրյալ Լիաննա Ջավահիրյանը ցուցմունք է տվել, որ 2019 թվականի մարտից հաշվառվել է «Ավան» հոգեկան առողջության կենտրոնում, քանի որ հոգեկան և վարքային խանգարումներ է ունեցել: Դրանից բացի, մի քանի անգամ բուժում է ստացել նաև Ավանի նարկոլոգիական կենտրոնում: Դեղատոմսով «Ավան» հոգեկան առողջության կենտրոնից ստացել է «Տրիֆտազին», «Դիազեպամ», «Ազոլեպտին», «Վելաքսին», «Ալպրազոլան» և «Զոլոմաքս» տեսակի դեղեր և դրանք ամեն օր օգտագործել, որպեսզի իրեն նորմալ զգա: Եթե նշված դեղերը չխմի, իր մոտ կարող է առաջանալ մինչև գիտակցության կորուստ, ահավոր ագրեսիվանում է, կարող է ձայներ լսել, որոնք իրականում չկան: Նշված դեղերից բացի ամեն օր խմել է մոտ 15-20 հատ «Գաբաբենտին» և «Տեբանտին» տեսակի դեղահաբեր: Դեղերի քանակությունը կախված է իր վիճակից: 19 տարեկանում ամուսնացել է Գորիս քաղաքի բնակիչ Ռուբեն Հովհաննիսյանի հետ: Երբ 22 տարեկան է եղել, ամուսնալուծվել է, քանի որ իրար չեն հասկացել: Նախքան այդ ունեցել են 2 երեխա: Երեխաներից Շահեն Հովհիաննիսյանը ծնվել է 2007 թվականի մայիսի 9-ին, իսկ Մինա Հովհաննիսյանը՝ 2008 թվականի օգոստոսի 9-ին: Ամուսնալուծությունից հետո երեխաների խնամքով զբաղվել է ինքը: Քանի որ իր մոտ առաջացել են նշված հոգեկան խնդիրները, օգտագործել է հոգեմեդ դեղեր, դրանից ելնելով երեխաների պահելու հարցում օգնել են ծնողները, ովքեր Գորիս քաղաքում բնակվել են Օրբելյանների փողոցի 7-րդ շենքի 6-րդ բնակարանում: Գորիս քաղաքի բնակիչ Արա Դիլանյանի հետ մտերիմ է; իրար հետ շփվել են որպես ընկերներ: Ճանաչել է նաև Գորիս քաղաքի բնակիչ Անդրանիկ Մեժլումյանին, ում հետ ունեցել է մտերիմ հարաբերություններ: Քանի որ Արա Դիլանյանը հաշմանդամ է, գրեթե ամեն օր այցելել է նրան՝ կենցաղային հարցերում օգնելու համար: 2019 թվականի հուլիսի 2-ի առավոտյան, ժամ չի կարողացել հիշել, սովորականի նման հերթական անգամ միայնակ գնացել է Արա Դիլանյանի՝ Գորիս քաղաքի Յոլյան փողոցի 20-րդ հասցեում գտնվող առանձնատուն: Արա Դիլանյանը նշված տանը բնակվել է միայնակ: Տվյալ օրվա դրությամբ իր դեղերից «Տրիֆտազին», «Դիազեպամ» և «Զոլոմաքս» տեսակի դեղերը վերջացած են եղել, պետք է հուլիսի 4-ին գնար Երևան քաղաք՝ նշված դեղերը ստանալու համար: Նույն օրը՝ արդեն մութ է եղել, ժամ չի կարողացել հիշել, իրեն վատ է զգացել դեղերը չխմելու պատճառով, սրտի շրջանում այրոց և ցավ է զգացել, մատերը, շրթունքները թմրել են, շրթունքները նեվրոզի պատճառով սևացել են: Ստիպված դեղատնից գնել է 15 հատ «Գաբաբենտին» և 5 հատ «Տեբանտին» տեսակի դեղահաբեր ու միանգամից խմել: Դրանից հետո վիճակը չի կարգավորվել, որպեսզի նեվրոզը թողնի, իրար հետևից խմել է 2 հատ 0.5 լիտր տարողությամբ «Բալտիկա 9» տեսակի գարեջուր, ինչից վիճակն ավելի է վատացել: Դրանից հետո զանգահարել է 1-03 և քիչ անց Արա Դիլանյանի տուն է ժամանել շտապ օգնության ավտոմեքենան: Շտապ օգնության աշխատակցին, ում չի ճանաչել, ասել է, որ «Դիազեպամ» տեսակի դեղ ներարկեն, իսկ նա պատասխանել է, որ չի կարող ներարկել, բայց կարող է տանել հիվանդանոցի անհետաձգելի բաժին՝ այնտեղ ներարկելու համար: Դրանից հետո շտապ օգնության ավտոմեքենայով գնացել է հիվանդանոցի նշված բաժանմունք, ճնշումը չափել են, եղել է 70/50 /իր մոտ նորմալ ճնշումը 90/60/, որից հետո բժիշկ Լևոն Մամիկոնիչի որդին, ում անունը չի իմացել, ով նույնպես բժիշկ է, ասել է, որ կարող են տալ միայն 3 հատ «Վալերիան» տեսակի դեղահաբ ու մնա այնտեղ և հանգստանա: Դրանից հետո դեղ չներարկելու պատճառով վիճել են, չի ցանկացել մնալ հիվանդանոցում, խնդրել է, որ հետ տանեն Արա Դիլանյանի տուն, շտապ օգնության

ավտոմեքենայով հետ են տարել: Տանը ստիպված օգտագործել է 2 հատ «Ազոլեպտին» տեսակի դեղահաբ, որպեսզի քնի ու հանգստանա, սակայն դրանից ավելի է վատացել: Բժիշկը նշանակել է, որ քնելուց առաջ կարող է խմել 1 դեղահաբի մեկ քառորդ մասը, սակայն ինքը մի քանի անգամ շատ է խմել, որ շուտ քնի: Գիշերվա ժամը 12-ից հետո Արա Դիլանյանի տուն է եկել նաև Անդրանիկ Մեժլումյանը: Դրանից հետո իր մոտ սկսվել է հալուցինացիա, իրեն թվացել է, թե դանակահարություն է տեղի ունեցել, որից հետո չի հիշել, թե ինչ բջջային հեռախոսահամարով զանգահարել է ոստիկանության 1-02 համարին և հայտնել, որ նշված հասցեում դանակահարություն է եղել: Քիչ անց նշված տուն են եկել ոստիկաններ, չի հիշում, թե քանի հոգով են եղել և ովքեր, սակայն նրանց տեսնելուց հետո պահի տակ կենտրոնացել է, սակայն հետո էլի նույն վատ վիճակն է եղել: Այնպես է եղել, որ որոշ բաներ հիշել է, իսկ որոշ բաներ չի հիշել, այն ժամանակ էլ պահի տակ գիտակցությունը տեղն է եղել, պահի տակ ոչ: Չի հիշել, սակայն հետագայում Անդրանիկ Մեժլումյանն ասել է, որ երբ ոստիկանները եկել են տուն, իրենց տարել են ոստիկանության Գորիսի բաժին, ապա նորից հետ են գնացել Արա Դիլանյանի տուն, որը սակայն չի հիշել: Դրանից հետո տուն են բերել ընթերակա, ով նշել է, որ ինքը լավ չի տեսնում և լավ չի լսում, դրանից ագրեսիվացել է՝ ասելով ում եք բերել և ասել, որ ուրիշ ընթերակա բերեն, բացի այդ էլ բոլորը պետք է ներկա գտնվեն գործողությանը, իսկ քրեականի պետը, ում չի ճանաչել, պահանջել է, որ բոլորը դրսում սպասեն: Նշված պատճառով իր և քրեականի պետի մեջ սկսվել է վիճաբանություն, ասել է, որ դա իր իրավունքն է, որ ներկա գտնվի գործողությանը, իսկ նա բռնի ուժով իրեն փորձել է դուրս հանել սենյակից, որի ժամանակ քրեականի պետը բռունցքով մեկ անգամ հարվածել է քթի և ճակատի հատվածին, ինչից հետո իր մոտ ահավոր ագրեսիվություն է սկսվել և չի հիշել, թե ինչ արարքներ է կատարել: Հիշել է միայն, որ իրեն քաշքշելով բերել են ոստիկանության Գորիսի բաժին, որտեղ պահանջել է շտապ օգնության ավտոմեքենա գա և իրեն ներարկի, քանի որ ահավոր վատ վիճակում է, կանչել են, 2 անգամ եկել են, սակայն օգնություն չեն ցուցաբերել: Պահանջել է զանգի իրավունք տալ, նույն քրեականի պետը իր բջջային հեռախոսով զանգահարել է իբր 1-02 համարին, վերցրել է, որ տան թեժ գծի համարը, սակայն չեն տվել: Մինչև ժամը լուսաբացի ժամը 11-ի սահմաններն իրեն պահել են բաժնում՝ ավելի կոնկրետ քրեականի պետի աշխատասենյակում, որի ընթացքում ներվային վիճակից վերցրել է գրիչը, կոտրել այն և դրանով վնասել ձախ ձեռքը, որից հետո քրեականի պետը ձեռնաշղթա է հագցրել, որից ավելի է ներվայնացել, 2 անգամ իրեն վնասելու նպատակով կծել է ձախ ձեռքը, ինչից հետո նա հանել է ձեռնաշղթաները:

Լիաննա Յուրիի Ջավահիրյանը *ծնվել է՝ 1986 թվականի նոյեմբերի 9-ին՝ Գորիս քաղաքում, ազգությամբ հայ, ՀՀ քաղաքացի, բարձրագույն կրթությամբ, ամուսնալուծված, նախկինում 4 անգամ դատված, չի աշխատում, հաշվառված և բնակվում է Գորիս քաղաքի Մ. Մաշտոցի փողոցի 67-րդ տանը, պահվում է ՀՀ ԱՆ «Աբովյան» ՔԿ հիմնարկում:*

Քրեական գործի նախաքննության ընթացքում պարզվել է, որ Լիաննա Ջավահիրյանը 2017 թվականի մարտի 24-ից «Հոգեկան և վարքային խանգարումներ՝ առաջացած թմրանյութերի և այլ հոգեակտիվ նյութերի համակցված գործածման հետևանքով: Կախվածության համախտանիշ» ախտորոշմամբ հաշվառված է «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲ ընկերությունում, «Հոգեկան և վարքի խանգարումներ առաջացած միաժամանակ և այլ հոգեակտիվ նյութերի ու մի քանի թմրադեղերի օգտագործում» ախտորոշմամբ «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունում, իսկ 2019 թվականի մայիսի 3-ից՝ «Հոգեկան և վարքային խանգարումներ թմրանյութերի և այլ հեգեակտիվ նյութերի համակցված գործածման հետևանքով, կախվածության համախտանիշ» ախտորոշմամբ «Ավան» հոգեկան առողջության կենտրոն ՓԲ ընկերությունում:

Նկատի ունենալով, որ Լիաննա Ջավահիրյանի հոգեկան լիարժեքության, մեղսունակության և գործի հանգամանքների նկատմամբ [illegible]

համար անհրաժեշտ են դատահոգեբուժական բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, հետևաբար ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով, 243-245, 247-248-րդ հոդվածներով,

որոշեցի՝

1. Վարույթումս քննվող թիվ 32200419 քրեական գործով նշանակել ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲ ընկերության ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննությունների հանձնաժողովի փորձագետներին:

2. Փորձագետներին պարզաբանման առաջադրել հետևյալ հարցերը.

1) Լիաննա Ջավահիրյանը նախկինում և ներկայումս տառապո՞ւմ է արդյոք հոգեկան հիվանդությամբ, թե՞ ոչ, եթե այո, ապա ի՞նչ հիվանդությամբ է տառապում և երբվանից:

2) Լիաննա Ջավահիրյանը հանցավոր արարքները կատարելու պահին տառապե՞լ է արդյոք հոգեկան հիվանդությամբ, եթե այո, ապա ի՞նչ հիվանդությամբ:

3) Լիաննա Ջավահիրյանը հանցավոր արարքները կատարելու պահին կարո՞ղ էր հաշիվ տալ իր գործողություններին կամ ղեկավարել դրանք:

4) Հաշվի առնելով Լիաննա Ջավահիրյանի հոգեկան զարգացման վիճակը՝ կարո՞ղ էր նա արդյոք լիովին գիտակցել իր գործողությունների նշանակությունը, և որքանով նա կարող էր ղեկավարել իր գործողությունները:

5) Լիաննա Ջավահիրյանն իր հոգեկան վիճակով կարո՞ղ էր ճիշտ ընկալել իր գողծողությունների նշանակությունը և դրանք ճիշտ վերարտադրել:

6) Լիաննա Ջավահիրյանն արարքը կատարելու պահին մեղսունա՞կ է, սահմանափա՞կ մեղսունակ, թե՞ անմեղսունակ:

7) Լիաննա Ջավահիրյանը հանրության համար վտանգ ներկայացնում է, թե ոչ: Նա հարկադիր բուժման կարիք ունի՞, թե՞ ոչ, եթե այո, ապա ի՞նչ տիպի հոգեբուժական հիվանդանոցում:

Փորձագետներին խնդրել պատասխանել նաև այնպիսի հարցերի, որոնք թեև սույն որոշման մեջ առաջադրված չեն, սակայն կարող են առաջանալ փորձաքննության ընթացքում, կմտնեն դատահոգեբուժական փորձագետի իրավասության մեջ և որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար:

3. Փորձագետներին ներկայացնել Լիաննա Ջավահիրյանին, ինչպես նաև տրամադրել նրա վերաբերյալ բժշկական փաստաթղթերի պատճենները և քրեական գործի նյութերը:

4. «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲ ընկերության ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննությունների հանձնաժողովին պարզաբանել փորձագետի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացնել ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով սահմանված քրեական պատասխանատվության մասին, նախնական քննության տվյալներն առանց քննիչի թույլտվության չհրապարակելու պարտականության մասին:

Գորիսի քննչական բաժնի պետի
տեղակալ, առաջին դասի խորհրդական *Ա. Մանուչարյան*